Կարելի է ենթադրել, որ Իվանեի՝ կռվի մեջ չմտնելու որոշման վրա ազդեցին նաև հայկական զորամասերի դժգոհ տրամադրություններն այն իմաստով, որ աթաբեկը հույս չէր դնում մարտի մեջ մտնելու նրանց պատրաստակամության վրա։ Այս տեսանկյունից, թերևս, պատահական չպետք է համարել այն փաստը, որ առանց մարտի մեջ մտնելու Սյունիք վերադարձավ Լիպարիտ Օրբելյանն իր զորամասով[39]։

Ցավոք, աղբյուրները հնարավորություն չեն ընձեռում պարզելու, թե Գառնիում Իվանեի բռնած դիրքորոշման վրա ինչ չափով էին ազդել Ռուսուդան թագուհու հետ նրա հարաբերությունները։ Իբն ալ-Ասիրը, պատմելով Ռուսուդանի կողմից նորանոր ամուսնությունների հարց արծարծելիս այդ մտադրությունների հանդեպ թշնամական դիրքի մասին, առաջին հերթին հիշատակում է Իվանեին[40]։ Այդ լարված հարաբերությունները թագուհու և աթաբեկի միջև արդյո՞ք հետք չթողեցին Իվանեի ճակատագրական որոշման վրա։

Այսպիսով, Գառնիի պարտության պատճառների շարքում վճռական դեր պետք է հատկացնել ոչ թե զուտ ռազմական գործոններին, այլ, ամենից առաջ, ներքին անհամերաշխությանն ու տարաձայնություններին, որոնք էլ

Պղնձահանեցու օրինակից, խաչ է քաշվում հայ քաղկեդոնականների պատկառազդու մշակութային վաստակի վրա (П. М. Мурадян, Культурная деятельность армян-халкедонитов в XI—XIII веках (II Международный симпозиум по армянскому искусству), Ереван, 1978)։ Ինչ վերաբերում է կոնկրետ Իվանե աթաբեկին, ապա եթե Շ. Մեսխիային ինչ-որ կերպ ներելի է երկաբնակ Իվանեի կողմից միաբնակ Հաղարծնի և Մորո Զորո վանքերը վերանորոգելու («Դիվան հայ վիմագրության», հ. VI, Երևան, 1977, էջ 22—24, 135—138) փաստերին անտեղյակ լինելը, ապա նա իրեն քաջածանոթ Կիրակոս Գանձակեցու Պատմությունից պարտավոր էր գիտենալ, որ հենց Իվանեն՝ տեղի և այնուհետև մյուս հայ իշխանների հետ միասին միջոցներ տրամադրեց Մխիթար Գոշին՝ Նոր Գետիկի վանքը կառուցելիս (Կիրակոս Գանձակեցի, էջ 210, 216)։ Հենց նույն Գոշը Զաքարեի հետ միասին Իվանեին էր դիմում՝ իրեն հուզող խնդիրներում երկուսի օգնությունն էլ հայցելով («Արարատ», 1900, էջ 497)։ Ազգային եկեղեցուց ամենևին էլ կտրված չէին նաև մյուս երկաբնակ հայ իշխանները։ Այսպես, Սադուն Մահկանաբերդցին և Ավագ աթաբեկի դուստր Խոշաքը մասնակցում էին հայոց եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ արծարծող Զագավանի 1270 թ. ժողովին. (Գ. Հովսեփյան, Զագավանից ժողովը, «Շողակաթ», էջմիածին, 1913, էջ 23—27)։ Նույն Սադունը համարվում էր «տէր Հաղբատայ՝ մեծ և հռչակաւոր սրբոյ ուխտին» («Պատմութիւն վասն ազգին Նեստորաց», էջ 28)։ Այս առումով չափազանց ուշագրավ է հատկապես Մխարգրձել Զաքարյանի և նրա կին Վանենիի արձանագրությունը Սանահինում. «Էկի վանքս ու զտեղս անմարդ գտաք, որ ի մուհասլաց եւ առաջնորդէ եւ այլ հարիէ աւէրած էր եւ էկեղեցիքս փակած։ Եւ զայս խաւարս տեսաք, մանու չափ արամեցաք, յաւագ զտակին զվ(ար)դ(ապետն)երն ի քաշ ին արարել եւ այլ շատ նախատինք։ Եւ արդ, ես, ամիրսպասալար Մխարգրձելս եւ թագաւորազն ամուսին իմ Վանենի.. մեր պապերէ զմեծ արձանս փորեցաք եւ զեկեղեցիքս ամեն ճարկէ ազատեցաք...» (Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 125)։ Ավելացնենք, որ Շ. Մեսխիան հաճախ միակողմանի է ներկայացնում նաև մյուս Զաքարյանների բարդ դավանական քաղաքականությունը՝ անտեսելով հարուստ և հավաստի հայկական վիմագրական նյութը և, ընդհակառակը, լիովին հավատ ընծայելով այս հարցում գույները խտացնող Կիրակոս Գանձակեցուն և Վարդան Արևելցուն։

39 Ստեփանոս Օրբելյան, էջ 399։

40 Ибн ал-Асир, с. 151.